ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արսեն Նիկողոսյան
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր,
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող քաղաքական, կրոնական, իրավական և ընդհանրապես սոցիալական գործընթացները իրենց բնակության վայրերից մարդկանց հարկադրաբար տեղահանելու պատճառ են դառնում, որոնք անմիջականորեն հակասում են այդ անձանց կամահայտնությանը՝ վերջիններիս վերածելով փախստականների: Այդ մարդիկ, լքելով իրենց բնակավայրերը, հաճախ ստիպված են լինում նաև հատել այլ պետությունների սահմանները, որն էլ իր հերթին հանգեցնում է բռնությունների, հետապնդումների: Այդտեղից էլ համապատասխան պետության իրավասու մարմինների և փախստականների միջև ծագում են որոշակի իրավահարաբերություններ (այդ թվում նաև՝ քրեահրավական): Այսինքն՝ փախստականների իրավունքը սերտորեն առնչվում է քրեական իրավունքին: Փախստականի կարգավիճակ չունեցող անձանց կողմից որոշակի գործողություններ կատարելու համար նախատեսված քրեահրավական բացասական հետևանքների օրինակ է պետական սահմանն ապօրինի հատելու հանցակազմի առկայությունը ***փախստականի կամ ապաստանի իրավունք հայցողի*** կարգավիճակ չունեցողի համար:

ՀՀ քրեական օրենսգիրքը պարունակում է մի շարք հանցակազմեր, որոնք այս կամ այն կերպ վերաբերում են այնպիսի սոցիալական խմբին, ինչպիսիք են փախստականները: ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով («Պետական սահմանն ապօրինի հատելը») սահմանված հանցակազմը հատուկ քննարկման կարիք ունի, քանի որ փախստականի և իրավասու պետական մարմինների միջև ծագող իրավահարաբերությունները հաճախ պայմանավորված են առանց իրավական պահանջների պահպանմամբ սահմանի հատմամբ, երկրորդ՝ ներպետական և միջազգային իրավական ակտերի միջև առկա են որոշ հակասություններ, որոնք հարթելու անհրաժեշտություն կա:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի համաձայն՝ պատասխանատվություն է առաջադրվում՝

1) առանց սահմանված փաստաթղթերի ՀՀ պահպանվող պետական սահմանը հատելու համար,

2) առանց պատշաճ թույլտվության ՀՀ պահպանվող պետական սահմանը հատելու համար:

ՀՀ օրենսդիրը սահմանել է տվյալ հանցակազմը որակյալ դարձնող հետևյալ հանգամանքները. մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից կամ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով արարքը կատարելը:

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ պետական սահմանն այն գիծն է և այդ գծով անցնող այն ուղղահայաց մակերևույթը, որոնք որոշում են ՀՀ տարածքի՝ ցամաքի, ջրերի, ընդերքի, օդային տարածության շրջա-

նակները[1]:

Պետական սահմանի առկայությունը պետության կարևորագույն հատկանիշներից է, որի վրա պետությունն իրականացնում է իր տարածքային գերիշխանությունը: Պետական սահմանի անձեռնմխելիությունը պետության տարածքային ամբողջականության կարևոր պայմաններից է: Դրա համար էլ օրենքը պատասխանատվություն է սահմանում պետական սահմանի անձեռնմխելիության դեմ կատարված ոտնձգությունների համար[2]: Այսպիսով, քննարկվող հանցակազմի օբյեկտը պետական սահմանի անձեռնմխելիության պաշտպանության հետ կապված հասարակական հարաբերություններն են:

Օբյեկտիվ կողմից սույն հանցակազմը դրսևորվում է գործողությամբ, այն է՝ առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց հատուկ թույլտվության ՀՀ պահպանվող պետական սահմանը հատելու (և՛ մուտք գործելու, և՛ մեկնելու) միջոցով:

Հանցակազմը ձևական է, ուստի հանցագործությունն ավարտված համարելու համար բավական է, որ անձը հատի սահմանը՝ մուտք գործելու կամ մեկնելու միջոցով:

Հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ մեղքի առկայության համար բավարար է այն, որ անձը գիտակցում է, որ հատում է պետական սահմանը: Հակառակ պարագայում, օրինակ՝ մոլորվելու կամ անզգուշությամբ սահմանը հատելու այլ դեպքերում, հանցակազմը բացակայում է:

Սույն հանցակազմի սուբյեկտ կարող են լինել 16 տարին լրացած անձինք:

ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածը բացառություն է սահմանել նույն հոդվածի 3-րդ մասով: Մասնավորապես նշվել է, որ հոդվածի գործողությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ վերապահված ապաստանի իրավունքից օգտվելու համար օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության մուտք է գործում ՀՀ:

ՄԱԿ-ի 1951թ. «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի[3] (այսուհետ՝ Կոնվենցիա) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պայմանավորվող պետությունները պատժամիջոցներ չեն կիրառում այն փախստականների ապօրինի մուտքի կամ ներկայության կապակցությամբ, ովքեր ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգվում էր 1-ին հոդվածի իմաստով, մուտք են գործում իրենց տարածք կամ գտնվում են այնտեղ առանց թույլատրության, պայմանով, որ նրանք անձամբ, առանց ծգձգման, ներկայանան իշխանություններին և մատնանշեն իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառ:***

ՀՀ Սահմանադրության 54-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան հայցելու իրավունք: Քաղաքական ապաստանի տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով[4]:

---

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2001.12.25/41(173):

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (չորրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով).- Եր.: ԵՊՀ հրատ., 2009, էջ. 966-967:

[3] Տե՛ս ՄՊՀՀՊՏ 2008 (Հատուկ թողարկում):

[4] Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21 (Հատուկ թողարկում):

Իսկ ահա ապաստանի և ապաստան հայցողի սահմանումները տրված են «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի՝ համապատասխանաբար 2-րդ և 5-րդ հոդվածներով: Մասնավորապես՝ ապաստանը օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին Հայաստանի Հանրապետությունում շնորհված պաշտպանություն է, որը երաշխավորում է նրա նկատմամբ չվերադարձնելիության սկզբունքի կիրառումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց՝ Կոնվենցիայով, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով շնորհված բոլոր իրավունքները: Ապաստան հայցողն այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն է, ինչպես նաև Կոնվենցիան ստորագրած որևէ պետության կողմից փախստական ճանաչված անձը, որը Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց է ներկայացրել:

Անհրաժեշտ է նշել, որ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան հայցողները և փախստականները ՀՀ ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության[1]:

Սա, ըստ էության, որոշակի կատեգորիայի անձանց լրիվ կամ մասնակի ազատումն է քրեական պատասխանատվությունից ու պատժից և կարող է դիտարկվել որպես իրավական պետությունում որոշակի սոցիալական գործոնների հետևանքով առաջացող երևույթների նկատմամբ պետության կողմից դրսևորվող մարդասիրական քայլ:

Այստեղ հարց է առաջանում այն մասով, որ, օրինակ, եթե փախստականը չի ցանկանում ապաստան հայցել ՀՀ-ում, այլ մուտք է գործել ՀՀ տարածք՝ այլ երկիր տեղափոխվելու նպատակով, ապա արդյոք նա կարող է օգտվել ՀՀ քրեական օրենսգրքի արտոնյալ պայմանից: Այս հարցին բացասական պատասխան տալու դեպքում առաջ է գալիս քրեաիրավական ներպետական օրենսդրության և փախստականների վերաբերյալ իրավական ակտի, ինչպես նաև միջազգային պայմանագրի նորմերի (Կոնվենցիային և 1967թ. «Փախստականների կարգավիճակի մասին» արձանագրության[2]) հակասության խնդիրը:

Կիրառելով տեքստային իրավամեկնաբանության ռազմավարության՝ օրենսդրի կամքի բացահայտման մեթոդը՝ ակնհայտ է դառնում, որ գործող օրենսդրության պարագայում, ըստ էության, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արտոնությունից օգտվելու հնարավորություն ստանում են միայն այն անձինք, ովքեր ցանկանում են օգտվել ապաստանի իրավունքից, որն էլ բերում է ՀՀ միջազգային իրավական ակտերով ստանձնած պարտավորությունների փաստացի չկատարմանը կամ առնվազն ներպետական օրենսդրության և միջազգային իրավական ակտերի հակասությանը, որն էլ իր հերթին իրավական անորոշություն է առաջացնում: Անհրաժեշտ է այստեղ նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը[3], որը դրվել է շրջանառության մեջ, քննարկվող հանցակազմին անդրադարձել է 436-րդ հոդվածում, որի 5-րդ մասում որպես արտոնյալ պայման է նախատեսել այն, որ նշված հոդվածի գործողությունը չի տարածվում թրաֆիքինգից տուժած անձի վրա, որը համագործակցում է իրավապահ մարմինների հետ, ինչպես նաև ապաստան հայցողի և փախստականի վրա: Ուստի այս ձևակերպումը լիովին արտացոլում է այն խնդիր-

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2009.01.14/2(668):
[2] Տե՛ս ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12):
[3] Տե՛ս https://www.e-draft.am/projects/496,ժամը 22:11, 06.11.2017թ.:

ները, որ կարող են առաջանալ գործող օրենսդրության պարագայում և միտված է ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի պահպանմանը և քրեաիրավական հարաբերություններում իրավական որոշակիության հաստատմանը ներկա ժամանակաշրջանում այնպիսի կարևոր սոցիալական երևույթի նկատմամբ, ինչպիսին փախստականների իրավունք է:

Պետք է նշել, որ նմանատիպ փոփոխություններ կատարվել են նաև այլ երկրների օրենսդրություններում, որոնք մաս են կազմել Կոնվենցիային: Այսպես, օրինակ, Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքի 371-րդ հոդվածը («Բելառուսի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատելը») պարունակում է ծանոթագրություն այն մասին, որ համապատասխան հոդվածի գործողությունը չի տարածվում այն օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վրա, որոնք միջնորդում են Բելառուսի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ կամ լրացուցիչ պաշտպանություն կամ ապաստան ստանալու համար[1]:

Ուկրաինայի քրեական օրենսգրքի 331-րդ հոդվածի («Պետական սահմանն ապօրինի հատելը») 4-րդ մասը սահմանում է, որ համապատասխան հոդվածի գործողությունը չի տարածվում օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վրա, որոնք Ուկրաինա են ժամանել երկրի սահմանադրությանը համապատասխան ապաստանի իրավունքի օգտագործման համար, փախստականի կարգավիճակ ստանալու նպատակով, ինչպես նաև անձանց վրա, ովքեր մարդկանց առևտրի հանցագործության զոհ են դարձել[2]:

Վրաստանի քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի («Վրաստանի պետական սահմանն ապօրինի հատելը») ծանոթագրության համաձայն՝ համապատասխան արարքի համար քրեական պատասխանատվությունից ազատվում են այն օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր Վրաստան են եկել անմիջապես այն տարածքներից, որտեղ իրենց կյանքին կամ ազատությանը վտանգ էր սպառնում՝ նախատեսված ՄԱԿ-ի 1951թ. «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 1-ին հոդվածով, և որոնք Վրաստանում են գտնվում առանց թույլտվության և Կոնվենցիային ու Վրաստանի օրենսդրությանը համապատասխան իշխանություններից հայցում են ապաստան՝ պայմանով, որ առանց հապաղելու ներկայանան իշխանության մարմիններին և ներկայացնեն անհրաժեշտ բացատրություններ անօրինական մուտքի կամ Վրաստանում գտնվելու վերաբերյալ, և իրենց արարքներում այլ հանցագործության հատկանիշներ առկա չլինեն, ինչպես նաև նշված արարքները կատարած անձինք, որոնք եղել են մարդկանց առևտրի (թրաֆիկինգի) զոհ մինչև նման կարգավիճակի ձեռքբերումը[3]:

Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը շատ ավելի համահունչ է Կոնվենցիային, քան Վրաստանի քրեական օրենսգիրքն է նախատեսել՝ հաշվի առնելով հենց այն հանգամանքը, որ արտոնությունից օգտվելու պայման է հանդիսանում Վրաստանում ապաստանի իրավունքը հայցելը, ինչը չի լուծում այն խնդիրները, որ բարձրացվել են մեր կողմից:

Այսպիսով, գործող ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասի տառացի մեկնաբանության համաձայն, պետական սահմանն ապօրինի հատելու հան-

[1] Տե՛ս http://xn----ctbcgfviccvibf9bq8k.xn--90ais/statya-371, ժամը 15:19, 30,10,2017թ.:
[2] Տե՛ս http://pravo-ukraine.org.ua/resyrsi/kz/ugolovnyj-kodeks-ukrainy/6119-statya-331-nezakonnoe-peresechenie-gosudarstvennoj-granicy, ժամը 15:35, 30,10,2017թ.:
[3] Տե՛ս https://matsne.gov.ge/ru/document/view/16426, ժամը 13,28-ին, 30,10,2017թ.:

ցակազմի գոյության մասին հնարավոր կլինի խոսել միայն այն դեպքում, երբ հստակ պարզված կլինեն ենթադրյալ իրավախախտի կողմից պետական սահմանը հատելու (մուտք գործելու) իրական շարժառիթները և նպատակը: Մասնավորապես, եթե դրանք վերաբերում են ապաստանի իրավունք հայցելուն, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով սահմանված հանցագործության մասին խոսք լինել չի կարող, ուստի և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով կա՛մ չպետք է հարուցվի քրեական գործ, կա՛մ հարուցված քրեական գործով վարույթը ենթակա է կարճման հանցադեպի բացակայության հիմքով:

Ի տարբերություն գործող քրեահրավական կարգավորումների՝ Կոնվենցիայի 31-րդ հոդվածը որպես իրավական նպատակ նախատեսել է պատժամիջոցներ չկիրառելը այն փախստականների նկատմամբ «..., ***ովքեր ուղղակիորեն գալով այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգվում էր 1-ին հոդվածի իմաստով*** *(այն է՝ մինչև 1951թ. հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձությունների և ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական կարծիքի հարելու պատճառով հետապնդվելու հիմնավորված երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ, նման երկյուղի պատճառով, չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և նման իրադարձությունների հետևանքով գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, անկարող է կամ, նման երկյուղի պատճառով, չի ցանկանում վերադառնալ այնտեղ)* ***առանց ձգձգման, ներկայանան իշխանություններին և մատնանշեն իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառ»:***

Այսպիսով, Կոնվենցիան «պատժամիջոցներ» չկիրառելը պայմանավորում է նրանով, որ անձը սահմանը հատում է առանց համապատասխան թույլտվության կամ մնում է երկրում առանց դրա այն դեպքերում, երբ նպատակ է հետապնդում փրկել իր կյանքը կամ ազատությունը, որը վտանգվել էր որոշակի ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով կամ որոշակի ռասայի, կրոնի, քաղաքացիության, սոցիալական խմբի կամ քաղաքական կարծիքի հարելու պատճառով:

Այսինքն՝ փախստականը կարող է ընդհանրապես պատկերացում անգամ չունենա ապաստանի իրավունքի կամ նման իրավունք հայցելու ո՛չ իրավական մեխանիզմների և ո՛չ էլ նման իրավունքի գոյության մասին, սակայն, ըստ Կոնվենցիոն կարգավորումների, պետք է իրենց գտնվելու երկրում «պատժամիջոցների» չենթարկվեն:

Այսպիսով, պետք է նշել, որ Կոնվենցիայի 31-րդ հոդվածը, ի հավելումն փախստականների՝ պետության տարածք մուտք գործելու կամ գտնվելու նպատակին, նախատեսում է նաև «առանց ձգձգման» իշխանության մարմիններին ներկայանալու և իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառ մատնանշելու պայմաններ, որպեսզի համապատասխան պետությունները «պատժամիջոցներ» չկիրառեն:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ «առանց ձգձգման ներկայանալու» պահանջը գնահատողական կատեգորիա է, և դատարանները յուրաքանչյուր առանձին վերցրած իրավիճակում իրավական վեճ առաջացած լինելու դեպքում պետք է գնահատման ենթարկեն ենթադրյալ իրավախախտում կատարած անձի՝ սահմանը հատելու և իշխանության մարմիններին ներկայանալու միջև ընկած ժամանակային խզման հիմնավորվածության հարցը: Այսպես, օրինակ, Ձաբարին ընդ-

դեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել էր, որ դիմումատուին քաղաքական ապաստան տրամադրելու հարցում մերժելը միայն ժամանելուց հետո 5-օրյա ժամկետում չներկայացնելու պատճառաբանությամբ՝ հաշվի չառնելով նրա փաստացի վախը վերադառնալու իր ծագման երկիր, ինչպես նաև այդքան կարճ ժամկետներ սահմանելը հակասում են մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում[1]:

Այսպիսով, «առանց ձգձգման» չափանիշի գնահատման համար հարկ է հաշվի առնել դեպքի անհատական հանգամանքները, ինչպիսիք կարող են լինել ինչպես անձի ֆիզիկակենսաբանական, այնպես էլ նրա հոգեբանական առանձնահատկությունները, մասնավորապես՝ իրավագիտակցության մակարդակը, նյարդային վիճակը, լեզվական խնդիրները, նախկին կենսափորձից բխող իշխանության ներկայացուցիչների հանդեպ վստահության մակարդակը և այլ անհատական հանգամանքները[2]:

Ավելին, պետք է նշել, որ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը ի դեմս 28-րդ հոդվածի, փախստականների և ապաստան հայցողների համար քրեական կամ վարչական պատասխանատվության չենթարկվելու արգելք սահմանելով, ընդհանրապես չի անդրադառնում փախստականների կամ ապաստան հայցողների՝ ՀՀ մուտք գործելու կամ գտնվելու ո՛չ նպատակներին և ո՛չ էլ այն պայմաններին, որ առկա են Կոնվենցիայի 31-րդ հոդվածում:

Ըստ էության, միջազգային պայմանագրերը սահմանում են իրավունքների պաշտպանության ներքևի սանդղակը, որից ներքև իջնելն անթույլատրելի է, իսկ ահա եթե պետությունները սահմանում են իրավունքների պաշտպանության ավելի բարձր չափանիշներ, տրամադրում են ավելի շատ երաշխիքներ, ապա նման դեպքերում պետք է գործեն ներպետական իրավական կարգավորումները: Ինչպես նշում է ՄԻԵԴ-ն իր նախադեպային վճիռներում, իրավունքների պաշտպանության Կոնվեցիոն համակարգը միայն սուբսիդիար է ազգային համակարգերին[3]:

Այսպիսով, փախստականների իրավունքների միջազգային իրավական կարգավորումները՝ համադրված ներպետական իրավական կարգավորումների հետ, խիստ արդիական են դարձրել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ դրանով իսկ իրավական որոշակիության բարձր մակարդակի բարձրացնելով աշխարհաքաղաքական ներկա ժամանակաշրջանում այնպիսի զգայուն մի սոցիալական խմբի իրավունքները, ինչպիսին են փախստականները:

---

[1] Տե՛ս Զաբարին ընդդեմ Թուրքիայի, ՄԻԵԴ, թիվ 40035/98, վճիռ 11,07,2000թ., կետ 40:

[2] Տե՛ս UNHCR comments on the Draft New Criminal Code of the Republic of Armenia with particular reference to the wording of Article 329(3) of the existing Criminal Code UNHCR comments on the Draft New Criminal Code of the Republic of Armenia with particular reference to the wording of Article 329(3) of the existing Criminal Code

[3] Տե՛ս https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=2&cad=rja&uact=8&ved=0ahUKEwj2rvKhz6rXAhUEDOwKHdR-BQ0QFggyMAE&url=http://at.gov.lv/files/uploads/files/docs/conferences/protectionconf/jociene-galigais.doc&usg=AOvVaw2U5rGBgZ5FIBYUg5IBRNAB

ЗАЩИТА БЕЖЕНЦЕВ В КОНТЕКСТЕ УГОЛОВНОГО КОДЕКСА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Арсен Никогосян
Судья суда первой инстанции общей юрисдикции города Еревана,
доцент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук

В статье был рассмотрен ряд вопросов, которые связаны с уголовной защитой беженцев в конетексте применения 329-й статьи Уголовного кодекса РА – "Незаконное пересечение государственной границы". Автор, изучив особенности вышеупомянутого преступления, а также содержание понятий "убежище" и "проситель убежища", предусмотренных законодательством РА, попытался выяснить, в какой мере действующее законодательство РА обеспечивает для данной категории лиц возможность воспользоваться уголовно-правовой неприкосновенностью в случае незаконного пересечения границы, согласно минимальным гарантиям, предусмотренным международными правовыми актами.

THE PROTECTION OF REFUGEES IN THE CONTEXT OF THE CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Arsen Nikoghosyan
Judge of the First Instance Court of General Jurisdiction of Yerevan,
Docent at the YSU Chair of Civil Procefure,
Candidate of Ledal Sciences

In the article the author has examined a number of issues that are related to the protection of the rights of the refugees in the context of Article 329 of the Criminal Code of the RA (“Illegal state border crossing”). Analyzing the elements of the abovementioned crime, as well as the concepts of "shelter" and "seeking asylum" according to the legislation of the RA, the author has made an attempt to explain if the legislation of the RA provides the minimum guarantees of international legal acts referring to the criminal immunity of the people of abovementioned catagories in the cases of illegally crossing the state border.

Բանալի բառեր – *փախստական, քրեական օրենսգիրք, փախստականների իրավունք, քրեաիրավական պաշտպանություն, ապօրինի մուտք, ապաստան, ապաստանի իրավունք հայցող, պետական սահմանն ապօրինի հատելը, «առանց ձգձգման» չափանիշ*

Ключевые слова – *беженец, уголовный кодекс, права беженцев, уголовно-правовая защита, незаконный въезд, убежище, проситель убежища, незаконное пересечение государственной границы, критерий «Без задержки»*

Key words: *refugee, criminal code, refugee rights, criminal-legal protection, illegal entry, asylum, asylum seeker, illegally crossing the state border, "Without delay" criterion*